դարձեալ նոյն գթալիր պաշտպանութիւն ընձեռել առ նա սակս քաղաքին այնորիկ։ Նա զի և պարգևեալ ազատութիւն իւրոց գործակատարաց, որք մարթասցեն այսուհետև երևել շքեղ բնակարանս ձեր և ունել շնորհս առաջի ձերումդ գերազանցութեան, որով հեշտեաւ կարասցեն հասանիլ վերստին շնորհաց ձերումդ գերազանցութեան։

Եւ ես խնդրեմք, զի ներեսջիք մեզ և ի մասնաւորի ուղղեալ ձերումդ գերազանցութեան և զայս միւս ևս խնդիր, զի հրաման տաջիք այժմէն երթալ և հաստատել զազիս մեր և զկարասիս (եթէ տէր կամիցի) ի քաղաքին Լոռուոյ ընտանեօք և որդովք մերովք, լինելով քաղաքն այն մասամբ իմիք մեր երկիր մայրենի յաշխարհին Հայաստանի, որ այժմ գտանի ընդ բարեխնամ կառավարութեան ձերումդ գերազանցութեան։ Յայտնելով զվստահութիւն հաճութեան մերոց, յամենայն ժամու պատրաս[տ] եմք ցուցանել ձերումդ գերազանցութեան սրիրոյն մերոյ և զպատկառանաց զարգասիս, որ եմք ձերումդ գերազանցութեան ամենախոնարհ ծառայ

Մատրաս

Յունիս, 30 1806

1 Յովհաննէս Շամիր որդի հանգ.
Շամիր Սուլթան իշխանի

2 Նազար Յակոբջան Շամիր թոռն հանգ.
Շամիր Սուլթան իշխանի

Վկայեմ զվերոյգրեալ ստորագրութեանց Յովհաննէս Շամիր իշխանին և Նազար Յակոբջան Շամիր իշխանի, որք ստորագրեցին ի ներկայութեան իմոյ և են երկոքեան սոքա տեր իրաւանց իւրեանց։

ի վկայութիւն ճշմարտութեանս
Ռոպէրթ Օրմի
հասարակաց նոտարիոս
Մատրաս

|| 1829 հոկտ. 30. Յովսէփ Յովհաննէս Ամիր-խան մեծ կալուածատէր ի Ջաւայ կղզին Հնդկաստանի խնդրեաց ի Նիկողայոս կայսերէն ռուսաց ստանալ յինքենէ զ500000 ֆրանքնոց եկամուտս ի տարին և փոխանակ այնր տալ ինքեան ի սեպհականութիւն զԱրարատեան նահանգն, ուր գտանին Երևան և Նախիջևան, այն է միայն Արարատեան դաշտն սկսեալ ի Կողբայ ցԳողթն վասն հաստատելոյ անդ զհայկական իշխանութիւն ընդ պաշտպանութեամբ ռուսաց և դաշնակից նորին, բայց կայսրն ոչ հաճեցաւ ընդ այն առաջարկ՝ պատճառելով, թէ արդեն ի 1827 ամէ զայն նահանգ համարուեալ է ընդ նահանգս Ռուսաստանի և զինքն անուանեալ է «Արքայ Հայաստանի»։

ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 17, վավ. 68, թարգմանության սեպագրություն, 3 էջ։

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Կարապետ Գասպարյան կամ Կարապետ Գասպարի Խաղակյան վաճառականի մասին, որը XVIII դարի վերջին երկու տասնամյակներին էջմիածնի կաթողիկոսարանի ու հատկապես վրաց արքունիքի կապը հնդկահայ գաղթօջախի հետ իրագործողներից մեկն էր, տե՛ս Վ. Մարտիրոսյան. Հայերի առևտրական գործունեությունը Քարթլ-Կախեթի թագավորությունում (XVIII դ. երկրորդ կես).—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1974, № 11, էջ 66։ Պ. Ջորանյան. Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին. Երևան, 1981, էջ 87, ծան. 28։

2 Սուլթան դիվան Թումանյանը (Թումանով, Թումանիշվիլի), որ Պ. Ս. Պոտյոմկինի մոտ մղել էր դեռևս 1783 թ. Գեորգիևյան դաշնագրի կնքման ժամանակ, կրկին որպես Հերակլ II-ի